

ԿՈՎԿԱՍԻ ԳՐԱԲՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ

Մ. Հ. ՄԵԼԻՔ-ՄԵՏԻՍԻԱՆ

Հայ գրականության և մամուլի աշխարհում անցյալ դարի 80-ական թթ. շատ է խոսվել ծայրահեղ ռեակցիոն գրաքննիչ Մ. Մելիք-Մեհրաբովի մասին: Այդ նա էր արգելում և կամ անշնորհ կրճատումներով աղավաղում գրողների բանաստեղծությունները, պատմվածքները, թղթագրությունները, հրապարակախոսների հոդվածները, բանավիճային ելույթները: Նա արգելում էր անգամ այլալեզու հոդվածների թարգմանությունների տպագրությունը կամ արտատպությունները ռուսական մամուլից:

Իրենց նամակներում Մելիք-Մեհրաբովի մասին վրդովմունքով են արտահայտվում Շիրվանզադեն, Պատկանյանը և այլ գործիչներ: Ալ. Շիրվանզադեն նրան անվանում է «մտքի դահիճ», «անգութ ռոզնեց», որը «չի կամենում, որ մեր լրագրության մեջ կենդանություն մնա»: Եղիշե Դեղամյանցն իր հուշերում պատմում է, թե Մելիք-Մեհրաբովը ինչ դաժանությամբ էր վարվում «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր Պ. Սիմեոնյանցի հետ, որից պահանջում էր թերթի անունից դուրս ձգել Հայաստանի բառը և թողնել միայն Մեղուն: «Խմբագիրն ստիպված էր թերթի անվան համար նոր տառեր ձուլել տալ, բայց այնպես, որ «Մեղուն» բռնում էր ամբողջ տարածությունը, իսկ «Հայաստանի» բառը նվազ տառերով մտնում էր նրա մեջ»¹: Մելիք-Մեհրաբովի երկար տարիների գործունեությունը իր մոայլ կնիքն է թողել առհասարակ ողջ հայ լրագրության այդ շրջանի պատմության վրա: Քանի որ արխիվային մի շարք նորահայտ փաստաթղթեր ապացուցում են, որ իրոք, այդ գրաքննիչը մտածված կերպով արգելակում էր հայ գրականության և մամուլի զարգացման նորմալ ընթացքը, մենք հարկ ենք համարում ընթերցողներին ծանոթացնել հարցին վերաբերող մի շարք փաստերի հետ:

XIX դարի վերջին քառորդում Կովկասի գրաքննական կոմիտեի կազմում, գրասենյակային մի շարք ծառայողներից բացի, հիմնականում աշխատում էին շորս հոգի. նախագահը (սկզբում Մոձալեսկի, ապա Յակիմով, դարավերջին՝ Գակկել), ռուսական ու եվրոպական լեզուների ավագ գրաքննիչը, արևելյան և տեղական լեզուների ավագ և կրտսեր գրաքննիչները: 1870—1900-ական թթ. մեզ հետաքրքրող վերջին երկու հաստիքները զբաղեցրել են Հ. Կայթմազովը, Ս. Մելիք-Մեհրաբովը, Գր. Կարախանյանը և Ալ. Քիշմիշյանը:

Ավագ գրաքննիչ Կայթմազովի մահից հետո 1872-ի հոկտեմբերին, տեղական և արևելյան լեզուների ավագ գրաքննիչ է նշանակվում Սոլոմոն խան Մելիք-Մեհրաբովը: Նրա հայրը, Ավագ խանը, անցյալ դարի 30-ական թթ.

¹ «Մեղու Հայաստանի», 1911, բացառիկ:

մինչև 1855 թ. աշխատում էր Պարսկաստանի ռուսական դեսպանատանը նախ իբրև թարգմանիչ, ապա՝ ռուս վաճառականների ավագ, տեղի փոստատան հիմնադիրն էր և քարվան-սարայների տեր։ Դրամական կորուստներ ունենալով, նա ընկնում է ծանր վիճակի մեջ և կաթված ստանում։ Լեվագ խանի տղան, Հազարյան ձեմարանը ավարտելուց հետո, 1861-ին իբրև գործավար աշխատանքի է անցնում Թիֆլիսի երկաթուղային վարչությունում, ապա 1872-ից գրաքննիչի պաշտոնով սկսում է աշխատել Գովկասի գրաքննական կոմիտեում։ Այս պաշտոնը նա վարում է մինչև 1890-ի դեկտեմբերը։

Մելիք-Մեհրաբովի շուրջ քսան տարիների գործունեությունը թողնում է այնպիսի տպավորություն, ասեք նա տառապել է հայկական դրական աշխարհում թշնամիներ որոնելու, գտնելու և դրանց պատժելու ինչ-որ մոլուցքով։ Գրողները, հրապարակախոսներն ու անգամ հայ հոգեւորականները Մելիք-Մեհրաբովի զեկուցագրերում ներկայացվել են իբրև «հակապետական էլեմենտներ»։ Տարիներ շարունակ նա վերադաս պաշտոնատար անձանց զեկուցագրեր էր ներկայացնում այս կամ այն թերթի, այս կամ այն գործչի, դրական զանազան երևույթների մասին, միշտ և շարունակ պահանջելով դադարեցնել թերթը, պատժել խմբագրին, հրատարակչին, գրողին։ Գրաքննական կոմիտեն մի անգամ չէ, որ նրա ահադանգերի հետքերով քննարկել է հայ մշակութային կյանքի հետ կապված այլևայլ հարցեր։ Մելիք-Մեհրաբովը անվերապահ հեղինակություն էր, ուստի բոլոր վիճելի հարցերում կոմիտեն և կառավարչապետությունը հենվում էին նրա կազմած լրացուցիչ զեկուցագրերի վրա և իրենց հետևություններն ու դատավճիռները կազմում էին նրա ստահոգ պնդումների համաձայն։ Մամուլի գործերի գլխավոր վարչությանը ներկայացվող բացատրագրերը և զեկուցագրերը նույնպես կազմվում էին Մելիք-Մեհրաբովի մշակած սխեմաներով։

Ծանոթանա՞նք շինովնիկ Մելիք-Մեհրաբովի անփառունակ գործունեության մի քանի գրվագների հետ, որոնք բնավ էլ չեն սպառում երկու տասնամյակների նրա կատարած գործերի ցանկը։ 1877 թ. դեկտեմբերին Մելիք-Մեհրաբովն արգելում է «Փորձ» հանդեսի համար Լեզար Հովհաննիսյանի ներկայացրած՝ «1848—1849 թթ. պատերազմի ժամանակի հունգարական ժողովրդական պոեզիան» թարգմանական հոդվածը։ Երբ խմբագիրը բողոքում է ռուսական գրաքննության կողմից ժամանակին թույլատրված այդ հոդվածի մերժման դեմ և փոխարքայությանն է ներկայացնում դրա ֆրանսերեն բնագիրը, հարցի ուսումնասիրությունը հանձնարարվում է նույն Մելիք-Մեհրաբովին։ Վերջինս, հայկական օրինակը համեմատելով ֆրանսերեն բնագրի հետ, գտնում է մի շարք, իր տեսակետից կասկածելի շեղումներ և իր զեկուցագրում կառավարչապետի ուղղորդությունը հրավիրելով այդ բանի վրա, հասնում է նրան, որ Հովհաննիսյանի դիմումը մնում է անհետևիվանք և հոդվածը կրկին մերժվում է՝ իր ապատասխանական միտվածության պատճառաբանությամբ։

1879 թ. Մելիք-Մեհրաբովը պահանջում է պատասխանատվության կանչել Գր. Լեծրունուն՝ «Մշակի» խառը լուրերի մեջ առանց գրաքննության թույլտվության Հյուգոյի նամակի տպագրության համար, որտեղ մի քանի խոսք էր ասված Հայաստանի ապագայի մասին։

1882 թ. մայիսին Թիֆլիսում տպագրվում է Սիմեոն Հախումյանի «Գործ»

հանդեսի առաջին համարը, որը հրատարակվում էր Շուշի քաղաքում, գրաքննության ենթարկվում Գանձակում, բայց միաժամանակ գտնվում էր Կովկասի գրաքննական կոմիտեի վերահսկողության տակ: Մելիք-Մեհրաբովը, ստանալով «Գործի» առաջին պարտագիր օրինակները, իսկույն ահազանգ է տալիս: Ամսագրում զետեղված նյութերի մեծ մասը նա համարում է վտանգավոր, խմբագրի հայացքները՝ ծայրահեղ և հոսանում է այն բանին, որ տպաքանակի երկու երրորդը (որը բաժանված չէր), բռնագրավվում է և ոչնչացվում²:

1882-ի ապրիլին Մելիք-Մեհրաբովը գրաքննական կոմիտեին զգուշացնում է, որ «Մասիսի» արգելված համարները ինչ-որ ճանապարհով մուտք են գործում Կովկաս: Այնուհետև նա «իմ պարտքն է համարում» մի հատուկ զեկուցագիր ներկայացնել արևմտահայ մամուլի ուղղության մասին: Անդրադառնալով արևմտահայ թերթերի «թշնամական» ելույթներին և մասնավորապես «Մասիս» և «Արևելյան մամուլ» պարբերականների ուղղության հարցին, նա գրում է. «Այս հրատարակությունները դեռևս անցյալ աշնանից աշխույժ բանավեճ են վարում այն հարցի շուրջը, թե ազգային շահերի տեսակետից առավել հարմար ինչ ձևով սլետք է դրվի հայկական հարցի լուծման խնդիրը: Ըստ որում՝ հայկական հարցի մասին խոսելիս հիշյալ հրատարակությունները նկատի ունեն ոչ միայն թուրքական հայ նահանգները, այլև ռուսական պետության սահմաններում գտնվող նահանգները»³: Զեկուցագրի շուրջը ծավալված գրագրությունները ստիպում են գրաքննական կոմիտեին առավել ևս ուժեղացնել արտասահմանյան հայ մամուլի նկատմամբ կիրառվող խստությունները:

Մելիք-Մեհրաբովի պրովոկացիոն գործունեության գլուխ-գործոցն է, սակայն, Մամուլի գործերի գլխավոր վարչության համառ կազմած 1884 թ. նոյեմբերի 12-ի զեկուցագիր-մատնությունը («Զեկուցագիր՝ Ռուսաստանի և մասնավորապես Կովկասի հայ մամուլի ուղղության մասին և արտասահմանի հայ մամուլի վերաբերմունքը մեր պետության նկատմամբ»): Այստեղ ամեն ինչ ներկայացվում է այնպես, ասեք մամուլի հայկական օրգանները ռուսական պետության թշնամիներն էին, որ ձգտելով հայության միությանն ու քաղաքական անկախությանը, ցանկանում էին եկեղեցին դարձնել քաղաքական կենտրոն, որ արևելահայ գործիչները թշնամական թղթակցություններ են զետեղում արևմտահայ թերթերում և այլն: Այնուհետև նշվում էր, թե սրանք, շրջանցելով տեղական գրաքննությունը, մի շարք վտանգավոր գրքեր են տպագրել Մոսկվայի և Պետերբուրգի գրաքննության թույլտվությամբ («Հայաստանի աշխարհագրությունը», «Քնար Հայաստանի» և այլն): Իբրև օրինակ հիշատակվում էր Փանոսովի՝ Մոսկվայում տպագրված «Փառք Հայաստանի» նկարը, որը պատկերում էր հայ թագավորներին և, Մելիք-Մեհրաբովի որակավորումով՝ անկասկած նպատակ ունեւր «ժողովրդի մեջ քաղաքական գաղափարներ արթնացնել՝ կորցրած թագավորությունը վերականգնելու մասին»: Պետերբուրգյան գերատեսչության ուշադրությունը հրավիրե-

² Տե՛ս Մ. Մխիթարյան, Ու. Հախումյանի «Գործ» հանդեսը («Հայ պարբերական մամուլի պատմությունից», հատ. 1, Երևան, 1963):

³ Վրացական ՈՍԶ կենտր. պետ. արխիվ, ֆոնդ 480, գիրք Ա, գործ 52:

լով այս փաստերի վրա, Մելիք-Մեհրաբովը միաժամանակ առաջարկում էր արգելել «Արևելք» թերթի մուտքը Ռուսաստան:

1885-ի սեպտեմբերի 11-ին գրած մի ղեկուցագրով, Մելիք-Մեհրաբովը, նշավակելով Վառնայում հրատարակվող «Իրավունք» թերթը, պահանջում է արգելել դրա մուտքը Ռուսաստան: Մասնատելով առաջին 16 համարների հոդվածները, նա թերթի հիմնական նպատակն է համարում հայության երկու հատվածների քաղաքական միավորման գաղափարը՝ պատմական Հայաստանի տերիտորիայի վրա: Հայտնում է, որ հոդվածներում քննադատվում են ոչ միայն թուրքական բռնապետությունը, այլև ցարիզմի քաղաքականությունը՝ մասնավորապես հայկական դպրոցների փակման և կաթողիկոսական ընտրություններին միջամտելու հարցում:

Նույն թվականի դեկտեմբերի 18-ին Մելիք-Մեհրաբովը մի այլ ղեկուցագրում կոմիտեի ուղադրությունը հրավիրում է Մարսելում հրատարակվող «Արմենիայի» ուղղության վրա: Նա գրում է, թե լրագրի հոդվածների հեղինակները նպատակ ունեն հայերի մեջ արծարծել անկախության զգացումներ և արևմտահայությանը ղենքի կոչել թուրքական բռնապետության դեմ: Այնուհետև խոսելով լրագրում տպագրված այլևայլ հոդվածների «կասկածելի» գաղափարախոսության մասին, Մելիք-Մեհրաբովը համերաշխություն է տեսնում «Արմենիայի» և «Իրավունքի» ուղղությունների միջև և հայտարարում, թե այս երկու թերթերը ծառայում են «մեկ ընդհանուր կազմակերպված կուսակցության, որը բացահայտորեն պրոպագանդում է հայ ժողովրդի քաղաքական վերածնության գաղափարը»: Նզրակացությունը նույնն է. «Արմենիան» ևս ռուսական պետության սահմաններում և, մասնավորապես, Գովկասում, վնասակար ազդեցություն կարող է ունենալ տեղի հայության վրա, ուստի լրագրի մուտքը Ռուսաստան պետք է արգելվի»⁴: 1886 թ. սկզբից «Իրավունք» և «Արմենիա» թերթերի մուտքը Ռուսաստան արգելվում է: Մելիք-Մեհրաբովը շարունակում է իր տենդագին գործունեությունը: Այժմ նրա գրչի զոհերն են դառնում «Արևելյան մամուլ» ամսագիրը և «Հայրենիք» լրագիրը: «Անխոնջ» գրաքննիչը գրում էր, թե «Արևելյան մամուլը» Մակարի հաստատումից հետո իր ջանքերով արգելվել է մեկ տարի ժամանակով, բայց այժմ շարունակում է նախկին վտանգավոր ուղղությունը, որն առավել ցայտուն է դարձել հայկական դպրոցները փակվելուց հետո: Դտնում է, որ կոմիտեն խաբվել է՝ մտածելով, թե «Արևելյան մամուլի» ուղղությունը կփոխվի: Առաջարկում է արգելել ինչպես այս պարբերականի, այնպես էլ «Հայրենիք» թերթի մուտքը Ռուսաստան, որպես «անխտիր վտանգավոր ուղղության» հրատարակություններ⁵:

Մելիք-Մեհրաբովը երբեմն հավասարակշռությունից հանում էր ոչ միայն հայ լրագրողներին, որոնք ատում էին նրան, այլև վրաց առաջավոր դործիչներին: Հայտնի հրապարակախոս և խմբագիր Նիկո Նիկոլաձեին նա զայրացնում է այն աստիճան, որ մի գիշեր Նիկոլաձեն գալիս է նրա տուն, պոկում զանգը, փորձում ջարդել դուռը և սպառնում է սպանել Մելիք-Մեհրաբովին: Ի դեպ, շատ հատկանշական է, որ մինչդեռ ժամանակի առաջավոր թերթերը

⁴ Նույն տեղում, գործ 693:

⁵ Նույն տեղում, գործ 776:

կշտամբում են Մելիք-Մեհրաբովին՝ նիկոլաձեի նկատմամբ թույլ տված անիմաստ խստությունների համար, ցարական ռեակցիոն մամուլի պարագլուխ Կատկովը պաշտպանության տակ է առնում նրան և, վերջինիս վկայությամբ, իր «Московские ведомости» թերթում առաջնորդող է նվիրում հայ գրաքննիչին⁶:

1890 թ. դեկտեմբերին հրապարակվում է Ս. Մելիք-Մեհրաբովի աշխատանքից ազատվելու լուրը: Այնուհետև նա դառնում է Պետերբուրգում հրատարակվող «Свет» թերթի աշխատակիցը: Այս հաղորդման ժխտ տողերը շատ ճշմարտություններ էին թաքցնում ըսթերցողներից: Մեզ համար նույնպես անհայտ էր մնում, թե ինչու նա թողեց կոմիտեի իր աշխատանքը և համաձայնվեց աշխատանքի անցնել մայրաքաղաքի մի աննշան թերթում: Խբիլիսիի պետական արխիվի ֆոնդերից մեկում վերջերս մեզ հաջողվեց ծանոթանալ մի քանի գործերի հետ, որոնք ի վերջո բացեցին Մելիք-Մեհրաբովի կյանքի մեզ անհայտ այդ շրջանի պատկերը: Պարզվում է, որ Մելիք-Մեհրաբովը հեռացվել է աշխատանքից: Դեռևս 1889-ին Կովկասի գրաքննական կոմիտեի նախագահ Յակիմովը հարց է բարձրացնում նրան հեռացնել աշխատանքից, բայց գրաքննիչի խնդրանքով որոշվում է սպասել մինչև 1890-ի գարունը, որպեսզի նա կարողանար անցնել թոշակի: 1890-ի հոկտեմբերին կառավարչապետին ուղղած իր պաշտոնական գրության մեջ Յակիմովը կրկին պնդում է հեռացնել նրան և հիմնավորում է այդ պահանջը: Ի թիվս հայ գրաքննիչի այլևայլ թերությունների (մեծամտություն, վառասիրություն, կոպտություն), Յակիմովը նշում է և հայ լրագրողների նկատմամբ նրա դրսևորած անարդար ու անհիմն խստությունների փաստը: «... հավանաբար, ինչոր հիվանդագին տրամադրության ազդեցությամբ Մելիք-Մեհրաբովը ամենուր հակված է տեսնել մատնություն, դավաճանություն, քաղաքական անբարեհուսություն», որի պատճառով էլ ամենքը խորշում են նրանից:

Մելիք-Մեհրաբովին ուղարկում են Պետերբուրգ: Այստեղ ապրելու տարիներին նա բազմաթիվ դիմումներ է հղում ներքին գործոց մինիստրին, մամուլի գործերի գլխավոր վարչության պետին և անգամ թագավորին, բայց ապարդյուն: Նրան նշանակում չեն տալիս Կովկասում: Ի վերջո, երբ 1897-ին Կովկասի կառավարչապետ է հաստատվում Գուլիցինը, Մելիք-Մեհրաբովը շտապում է շնորհավորել նրան և միաժամանակ խնդրում օգնել իրեն՝ վերադառնալու հայրենիք: Նա հույս է հայտնում, որ կառավարչապետը, հաշվի առնելով Կովկասի իրականության իր լավատեղյակությունը և նախորդ տարիների հավատարիմ ծառայությունը, իրեն աշխատանքի կվերցնի կառավարչապետության շրջանակներում: Գուլիցինը խոստանում է Կովկաս հասնելուն պես ծանոթանալ նրա գործերին, բայց ցարական այդ սատրապն անգամ մերժում է նրա դիմումը:

Այժմ մեր ձեռքի տակ են Մելիք-Մեհրաբովի բազում դիմումները, որոնք ապշեցուցիչ մանրամասներով բացահայտում են այդ ստահակի և պրովոկատորի նողկալի էությունը:

Իր նամակներում ու պաշտոնական դիմումներում Մելիք-Մեհրաբովը իրեն համարում է Յակիմովի վրիժառության օղհ և բացատրում է իրենց փոխհարաբերությունների վատացման պատճառները: Պարզվում է, որ իր

⁶ Նույն տեղում, ֆոնդ 12, գիրք 5, գործ 470:

սլաշտոնավարության վերջին տարիներին Մելիք-Մեհրաբովը վրիպումներ և սխալներ նշմարելով Յակիմովի գործերում, դարձյալ «իր սլաշտըն է համարել» վերադաս օրդանների ուղադրությունը հրավիրել նաև նրա վրա:

Մելիք-Մեհրաբովը գրում է, թե Յակիմովի հետ իրենք մեկ անգամ չէ, որ ընդհարվել են Կովկասի մամուլի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցում, ընդ որում ինքը բազմիցս զրավոր զեկուցագրեր է ներկայացրել, որոնք մտցվել են գրաքննական կոմիտեի նիստերի մատչանք: Հիմնական գծությունը տեղի է ունենում 1890 թ. օգոստոսի 8-ին նրա ներկայացրած հերթական զեկուցագրի առիթով, որտեղ, ի դեպ, Մելիք-Մեհրաբովը պահանջում էր «տեղական ուսական և հայկական հրատարակությունների մեջ արդել կրթոտ հոգվածները՝ ալն ժամանակ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող ապստամբական շարժումների մասին» և միաժամանակ պահանջում էր հաշվի առնել 1883 թ. կառավարական հրամանը՝ հայերի բաղադրական շարժումների վրա գրաքննական հսկողությունն ուժեղացնելու վերաբերյալ:

Տարիներ անց, խոցելու համար իր հզոր հակառակորդին, որն այդ օրերին զբաղեցնում էր ներքին գործոց մինիստրության լիազորի և կառավարչապետության խորհրդի անդամի սլաշտոնները, նախկին գրաքննիչը իր դիմումներում հանգում է անհեթեթ եզրակացությունների. «Գրաքննական կոմիտեի նախագահը բացահայտորեն հովանավորում էր հայերի տեպարատիստական շարժումները», — գրում է նա: Յակիմովը հովանավորում էր Կովկասի ուսական և ալալեզու մամուլի հեկակառավարական ուղղությունը, ավելացնում է նա մի այլ տեղ: Մելիք-Մեհրաբովը կրկին Յակիմովին է համարում մեղավոր այն բանի համար, որ Սպանդար Սպանդարյանը (այդ «նեղ ազգային կուսակցության ղիխավոր սլարազլուխներից մեկը») իր «նոր-դար» թերթում իբրև թե հակակառավարական ոգով տոգորված մի հոգված էր տպագրել: Դրաքննիչի պահանջով Սպանդարյանը դատական պատասխանատվության է կանչվում: Ահա այդ օրերին, երբ արգելվել էր «Արձադանքի» ղիխանկարը և Սպանդարյանը դատի էր տրվել (1890 թ.), Մելիք-Մեհրաբովն ստանում է մի անստորագիր նամակ, որի հեղինակը հայ խմբագիրների անունից ամենախիստ և անպատշաճ արտահայտություններով հայհոյում էր Մելիք-Մեհրաբովին: Արժանապատվությունից զուրկ գրաքննիչը տարիներ անց, չինովնիկի պեղանտության, իրեն անվանարկող այդ նամակի պատճենն առանց քաշվելու կցում է թագավորին ուղղած իր դիմումին, ընդգծելով այն միտքը, թե իբր հայ խմբագիրներն իրեն սպառնացել են սպանել:

Մելիք-Մեհրաբովի՝ Գուլիցինին ուղղած 1898 թ. մարտի 14-ի թվակիր նամակից հայտնի է դառնում այն փաստը, որ նա ամբաստանագիր է կազմել նաև 1884 թ. տեղի ունեցած կաթողիկոսական ընտրությունների մասին: Մելիք-Մեհրաբովը գրում է. «Ընտրություններից հետո դրա արդյունքների մասին անձամբ զեկուցելու համար գործուղված լինելով ներքին գործոց մինիստր Տոլստոյի մոտ, ևս նրան ներկայացրի ընտրական ադիտացիայի հանգամանալից պատկերը: Կոմս Տոլստոյը, անսալով իմ անկեղծ խոսքին, և ի խրատ հայկական շարժման սլարազլուխների, դիմեց և ստացավ բարձրագույն հրամանագիրը՝ ընտրությունները բեկանելու մասին, կոմսին ներկայացրած իմ զրավոր զեկուցագրի տվյալների հիման վրա»:

7 նույն տեղում, գործ 2204:

Ս. Մելիք-Մեհրաբովը Պետերբուրգում ապրելու տարիներին ևս լրտեսում էր կովկասյան մամուլին և խառնվում նրա գործերին: Այսպես, 1892 թ. հունիսի 17-ի գրությամբ մամուլի գործերի գլխավոր վարչության պետ Ֆեոկտիստովը Կովկասի գրաքննական կոմիտեի նախագահ Գակկելին տեղյակ է դարձնում այն իրողությանը, որ Մելիք-Մեհրաբովը մի անձնական նամակով դիմել է ներքին գործոց մինիստրին: Այդ նամակում, անդրադառնալով 1892 թ. կաթողիկոսական ընտրությունների կապակցությամբ Կովկասի վրացական և հայ մամուլի օրգանների գործունեությանը, Մեհրաբովը շեշտում էր, որ մի շարք հոգվածներ են տպագրվել արևելահայ եպիսկոպոսների մասին, որոնցում տեղ են գտել «ծայրահեղ անպատշաճ արտահայտություններ կառավարության հասցեին՝ կապված ընտրությունների հարցում նրա վարած քաղաքականության հետ»: Այս գրության հետքերով հայ և վրացի լրագրողներն ստիպված էին բացատրություն տալ կոմիտեի նախագահին⁸:

Որոշ փաստերից երևում է նաև, որ Մելիք-Մեհրաբովն այդ տարիներին կապված էր ժամանակի ամենաոռակցիոն օրգաններ «Новое время»-ի և «Гражданин»-ի խմբագրությունների հետ: Այսպես, 1895 թ. «Новое время»-ն հրատարակում է իր աշխատակից Կամսկու հոգվածը հայկական կոտորածների մասին: Հոգվածագիրը, նշելով հայերի «վատ հատկությունները», անուղղակիորեն արդարացնում էր թուրքական բարբարոսությունները: Այդ առիթով գրած իր բանավիճախն, բայց անտիպ հոգվածում «Արձագանքի» խմբագիրը, ի դեպ, գրում էր. «Իհարկե, երբ «Новое время»-ի աշխատակից Կամսկուն նյութ մատակարարողը մի նախկին հայ ցենզոր լինի, զարմանալի չէ, որ նա տպագրած խոսքը գլխավար կարգա»⁹: Որ իշխան Մեղ-չերսկու տիրահոլակ «Гражданин»-ի հետ Մելիք-Մեհրաբովը ուներ «ստեղծագործական» կապեր, երևում է իր՝ Մելիք-Մեհրաբովի՝ Դուլիցինին ուղղած դիմումից (18. I. 1897 թ.). «Զրկվելով հնարավորությունից օգտակար լինելու նորին կայսերական մեծության ծառայությանը և սրտի աննկարագրելի ցավով տեսնելով, թե ինչպիսի կործանարար հետևանքներ ունեն չարամիտ ագիտատորների մեքենայությունները, որոնք չարաշահում են հայկական հարցը իրենց անարխիստական նպատակների համար ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ռուսաստանում, և մոտիկից ծանոթ լինելով այդ հարցի բնույթին, ես իմ բարոյական պարտքը համարեցի հնարավորին չափ կանխել վերահիշյալ մեքենայությունների հետագա հետևանքները: Այդ նպատակով վերջերս ես մի քանի հոգված տպագրեցի «Гражданин» թերթում, որոնցում արժանահավատ փաստերի հիման վրա (որոնք ինձ հայտնի են Կովկասում երկարատև ծառայությունից և այդ երկրամասի ժամանակակից շարժումներից) պարզաբանել եմ հայկական հարցը և առհասարակ արևելյան հարցը...»¹⁰:

Ծտորաքարչ և բարոյազուրկ Մելիք-Մեհրաբովը մինչև վերջ էլ հավատարիմ մնաց իր էությանը:

⁸ Վրացական ՍՍՀ կենտր. արխիվ. ֆոնդ 450. գիրք և, գործ 1131:

⁹ Նույն տեղում, գործ 1273:

¹⁰ Նույն տեղում, ֆոնդ 12, գիրք 8, գործ 170:

ИЗ МАТЕРИАЛОВ КАВКАЗСКОГО ЦЕНЗУРНОГО КОМИТЕТА

М. А. МХИТАРЯН

(Р е з ю м е)

В сообщении приводятся интересные данные об архиреакционной, провокаторской деятельности царского чиновника, старшего цензора Кавказского цензурного комитета Соломона Мелнк-Меграбова, направленной против армянской литературы и печати в период 1872—1890 гг.